ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0019 Երևան, Մ. Բաղրամյան 19, հեռ. (+374 11) 888-107, 888-146, էլ. հասցե՝ intrel@armsai.am

№ 397-Հ «01» 10 2020թ.

ՀՐԱՄԱՆ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 28-ի N 42/44/45208-2020 գրությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մինչև ռազմական դրության ժամանակահատվածի ավարտը կասեցնել Հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 46-32.7-Մ2-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը:
2. Անձնակազմի կառավարման բաժնի պետ Ռ.Բաբայանին՝
   - կապի բոլոր միջոցներով ծանուցել մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացուն,
   - մրցույթը վերսկսելու մասին որոշում կայացնելու նույն կամ հաջորդող աշխատանքային օրը կապի բոլոր միջոցներով ծանուցել մինչև մրցույթի կասեցման իրավական ակտն ընդունելու օրը դիմած քաղաքացուն:

Հ.ԱՎԱԳՅԱՆ